ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«29» օգոստոսի 2019 թվականի N:195 ք.Գյումրի

ԼԵՅԼԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող, առողջապահության բաժնի պետ Լ.Ասլանյանի 2019 թվականի օգոստոսի 28-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող, առողջապահության բաժնի պետ Լեյլի Ասլանյանին 2019 թվականի օգոստոսի 29-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն՝ իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակներում իրականացված կանխարգելիչ պատվաստումների ցածր ցուցանիշների պատճառների վերլուծության վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի օգոստոսի 29-ին:
3. Լեյլի Ասլանյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Նազարեթյանին:

4. Լեյլի Ասլանյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է